# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 մայիսի 2025 թվականի № 199-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի № 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի № 194-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունվարի 8-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի 2025-2027 թվականների ռազմավարական և 2025 թվականի տարեկան ծրագրերը վավերացնելու մասին»* № 4-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման № 1 հավելվածի ***««Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն», ««Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն», ««Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն»*** և ***««Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն»*** բառերը հանել,

2) որոշման № 2 հավելվածի 9-րդ և 29-րդ կետերի գործողությունը դադարեցնել,

3) որոշման № 1 և № 2 հավելվածներում ***«Համապատասխանության և կատարողականի աուդիտ»*** բառերը փոխարինել ***«Համապատասխանության, կատարողականի և ֆինանսական աուդիտ»*** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի մայիսի 30**
**ք. Հրազդան**